ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Լրագրիների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները անգլիական նոր միխոտրութեան մասին:

Հռաւորը հաստատեց անգլիական նոր միխոտրութեան անդամների անունները: Պլատոնը արտաքին գործերի մինիստրի պաշտօնը յանձնեց կոմս Դրենվիլին, որ այդ պաշտօնը վարում էր 1868-ից մինչեւ 1874 թ.: Հնդկաստանի գործերի մինիստր ընտրված է Հարինգտոնն, գինուորական մինիստր Զալլերը, ծովային մինիստր Նորսբրուկ, ներքին գործերի մինիստր Հարկօրտ, լորդ-կանցլեր Սելբորն: Ինքը Դիզրաելին բացի առաջին մինիստրի պաշտօնից, ինչպէս երեւում է, կը վարէ նոյնպէս Գանձարանի կանցլերի պաշտօնը: Անգլիական բոլոր ֆինանսական շրջանները ցանկանում էին այդ, որովհետեւ նրանք անսահման հաւատ են ընծայում Դիզրաելիի ֆինանսական ընդունակութիւններին:

Միջազգային քաղաքականութեան տեսակէտից ամենանշանաւորն այն է, որ Դրենվիլ նշանակեցաւ արտաքին գործերի մինիստր, իսկ Հարինգտոն Հնդկաստանի գործերի մինիստր:

Դրենվիլի քաղաքական հայեացքները յայտնի են ամենքին, որոնք հետեւում էին 1868—1874 թ. անգլիական քաղաքականութեանը և այն վիճաբանութիւններին, որոնք լինում էին անգլիական պարլամենտի մէջ պահպանողական մինիստրութեան ժամանակ: Արտաքին գործերի նոր մինիստրի հայեացքները արմատականացէս հակառակ են Բիկոնսֆիլդի և Սալիսբուրիի հայեացքներին: Նա երբէք չէ համաձայնել այն մտքի հետ, որ Անգլիան պէտք է միշտ ընդդիմադրէ Ռուսաստանին արեւելեան և ասիական հարցերի մէջ: Կոմս Դրենվիլ միշտ այն կարծիքի է եղել, որ այդ երկու պետութիւնների համաձայնութիւնը խաղաղութեան գրաւական է: Այժմ ահիթ չը կայ մտածելու, որ Դրենվիլի քաղաքական այդ կարծիքները փոփոխված լինեն:

Նշանակված մինիստրների անունները ապացուցանում են, որ անգլիական պարլամենտի ազատամիտ կուսակցութեան բոլոր բաժանմունքները միացրած են: Այդ կազմակերպութենից երեւում է, որ ազատամիտ ամբողջ կուսակցութեան անդամների հայացքները նոր մինիստրութեան ընթացքի մասին միատեսակ են: Բայի դրանից այդ համաձայնութեան պատճառով մինիստրութեան քաղաքականութիւնն էլ որոշ և հաստատ կը լինի:

Անգլիական պահպանողական մամուլը ազատամիտների յաղթութեանը ընտրութիւնների ժամանակ բոլորովին ուրիշ նշանակութիւն էր տալիս: Նա պնդում էր, որ ազատամիտների միութիւնը ընտրութիւնների ժամանակ արհեստական էր, որ նրա նը պատին էր զորձերից հեռացնել բոլոր ազատամիտների համար ատելի Բիկոնսֆիլդի մինիստրութիւնը: Այդ մամուլը հաստատնում էր, որ հէնց որ մինիստրների ընտրութիւնը կը տեսնի, ազատամիտների մէջ անբարեկամութիւններ կը ծագեն: Այդ նախադասութիւնները չիրագործվեցան և Դիզրաելիի մինիստրութիւնը ամանց անբարեկամութիւնների կազմակերպված է:

Անգլիական պարլամենտը այս անգամ բացվեցաւ առանց գահական ճառի: Ճառի ընթերցանութիւնը յետաձգված է մինչեւ ընտրութիւնների վերջանալը: Այդ հանգամանքը շատ հասկանալի է. նոր մինիստրութեան համար դժուար էր փոքր ի շատէ ժողովրդական ճառ կազմել: Դիզրաելիի ճառի բովանդակութեան մասին առաջ իր ընկերների հետ պէտք է համաձայնի և յետոյ թագուհու համաձայնութիւնը ստանայ: Այդ զորձը բաւական դժուար է:

Այն հանգամանքները, որոնց ժամանակ կայացաւ Դիզրաելիի մինիստրութեան կազմակերպութիւնը, նրան թոյլ չեն տալիս գահական անգոյն ճառ կազմել: Դիզրաելիը այդ ճառի մէջ ամենաքիչը պէտք է յայտնէ ներքին և արտաքին իր քաղաքականութեան պրոգրամը: Իսկ այդ մեծութեան ժամանակ Դիզրաելիի սահմանված կը լինի պախարակել իր նախորդի գործունէութիւնը: Նա պէտք է խոստանայ, որ նոր կառավարութիւնը այնպիսի ճանապարհով կընթանայ, որ բոլորովին հակառակ կը լինի իր նախորդի ընթացքին: Միւս կողմից կասկածաւոր է, որ թագուհին ընդունի այդպիսի գահական ճառ:

ԴԻԼԱԲՈՆԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ

—

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետեւեալ առաջնորդող յօդուածը:

«Անգլիական ազատամիտ կուսակցութեան յաղթութիւնը և Դիզրաելիի նշանակիլը Բիկոնսֆիլդի տեղ գահական գատզութիւնների առիթ են տալիս և եւրոպական մամուլի քննութեան առարկայ են դարձել: Ակներև է, որ Դիզրաելիի յաղթութիւնը զարմացրեց եւրոպական լրագրութեան մեծ մասին: Ֆրանսիական նշանաւոր և ազդեցութիւն ունեցող լրագրները թշնամաբար վերաբերվեցին այդ փոփոխութեանը: Վիէննայի մամուլի յարձակումներից Դիզրաելիի վրա երևում է, որ աւստրո-ունգարացիներ քաղաքական մարդիկ երկիւղ են կրում, որ այստեղ այլ ևս չեն կարող հասնել իրանց մութ նպատակներին: Վերջապես զերմանական պաշտօնական մամուլը ակներև ցոյց է տալիս, որ Բիկոնսֆիլդի հրաժարականից անբաւական է: Գեռ Նորբերտս Բերլինի մէջ հրատարակվող «Post» լրագիրը պնդում էր, որ Դիզրաելիի մինիստրութիւնը դաշնակցութիւն կը կապէ համայն սլավոնական և նիհիլիստական կուսակցութիւնների հետ: Այդ լրագրի կարծիքով, Ռուսաստանի քաղաքագէտներից ոչ մէկը յոյս չէ կարող դնել Դիզրաելիի վրա, եթէ արեւելեան խնդիրը նորից ծագի:

Հետաքրքիր է և մի և նոյն ժամանակ մտածմունքներին առիթ է տալիս այն հանգամանքը, որ Ֆրանսիական, աւստրո-ունգարական և զերմանական մամուլը այդպէս է վերաբերվում անգլիական ազատամիտների փառաւոր յաղթութեանը: Ամենից առաջ հետաքրքիր է այն իրողութիւնը, որ քաղաքական զանազան նպատակներ ունեցող երեք պետութիւնների պաշտօնական լրագրութիւնը համոզված է, որ Դիզրաելիի յաղթութիւնը անպատճառ պէտք է վնասէ նրանց մի բանի շահերին և խանգարէ նրանց քաղաքականութեան ազատութեանը: Քանի որ Բիկոնսֆիլդ առաջնորդում էր անգլիական կառավարութեանը, Վիէննայում համոզված էին որ Աւստրո-Ունգարիան ազատ, առանց արգելքների կարող էր հարստահարել Բալկանեան թերակղզու ազգաբնակութեան առհասարակ այնները և արգելել նրանց քաղաքական վերածնութեանը: Քանի որ պահպանողական կառավարութիւնը գոյութիւն ունէր Անգլիայի մէջ, Բերլինում համոզված էին, որ, եթէ ընդհանուր սլավոնականութեան պատճառով որ և է անհամաձայնութիւն ծագէր, Անգլիան կը միանար Գերմանիայի հետ Ռուսաստանի դէմ: Վերջապես Ֆրանսիական քաղաքականութիւնը ձգտում էր լորդ Բիկոնսֆիլդի հաւանութիւնը ստանալու համար:

Հասկանալի է, որ այսպիսի հանգամանքների ժամանակ Դիզրաելիի առաջին մինիստրը ընտրվելը մտածմունքների առիթ դարձաւ Աւստրո-Ունգարիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի կառավարութիւնների համար: Աւստրո-Ունգարիայի և Գերմանիայի վրա անպլիական կառավարութեան փոփոխվելը բնականաբար աւելի էլ ասատիկ տպաւորութիւն պէտք է զործէր, որովհետեւ լորդ Բիկոնսֆիլդ պաշտպանում էր այդ պետութիւնների քաղաքական ձգտումները: Քանի որ աւստրիական և գերմանական կառավարութիւնները համոզված կը լինեն, որ նրանք ամեն ժամանակ Անգլիայի պաշտպանութեան վրա յոյս չեն կարող դնել, անկասկած նրանք աւելի կը զբաղվեն այն հարցերով, որոնց վերաբերեալ առաջ ուշադրութիւն չէին դարձնում:

Այդ փաստը Ռուսաստանը պէտք է ի նրկատի ունենայ: Ռուսաց մամուլը լաւ հասկացել է, որ անգլիական ազատամիտների յաղթութիւնը դատապարտեց Բիկոնսֆիլդի քաղաքականութիւնը: Ռուսաստանը յոյս ունի, որ անգլիական ազատամիտ կառավարութիւնը կուրորէն և թշնամաբար չի վերաբերվի ոչ դէպի ռուս ժողովուրդը, ոչ դէպի Բալկանեան թերակղզու բրիստոնեայ ազգաբնակութիւնը: Ռուսաստանի մէջ ամենքը ցանկանում են, որ շուտով վերջանվին Ցուսաստանի, Զիրնօգորիայի և ուրիշ հարցերը, որոնց Բերլինի կոնգրէսը անվերջ թողեց և որ կառարում խաղաղութիւն և համաձայնութիւն հաստատվի միջազգային յարաբերութիւնների մէջ: Դիզրաելիի յաղթութիւնը ուրախացրեց ռուսներին, որովհետեւ նրանք յուսացրվեցան, որ խաղաղութիւն կը հաստատվի և իրանք կարող են իրանց ներքին գործերի կարգադրութեամբ զբաղվել: Այսպէս պէտք է մեկնել ռուս հասարակութեան ուրախութիւնը Դիզրաելիի յաղթութեան պատճառով:

Տարաբաղդաբար արեւմտեան Եւրոպայի մէջ ռուսների բաւականութիւնը ուրիշ կերպ են մեկնում: Այդտեղ կարծում են, որ Դիզրաելիի յաղթութիւնը մեզ այն պատճառով է ուրախացնում, որ նա մեզ կոգնի փոփոխել Բերլինի դաշնագիրը և Բալկանեան թերակղզու վրա զորների այնպիսի դրութիւն ստեղծել, որ համապատասխան լինի ռուսների ձգտումներին:

Այդ բոլոր ենթադրութիւնները Ռուսաստանի վերաբերութեամբ բոլորովին սխալ են:

Կարելի է հաւատացած լինել, որ Դիզրաելիի քաղաքականութիւնը նոյնպէս հիմնված կը լինի Բերլինի դաշնագրի վրա, ինչպէս և Բիկոնսֆիլդի քաղաքականութիւնը: Միայն առաջինը բոլորովին ուրիշ նպատակների կը ձգտի: Դիզրաելիի, մեր կարծիքով, կը ձգտի պահպանել եւրոպական խաղաղութիւնը ոչ թէ մեծ հրաբիսպատակ բրիստոնեաներին, այլ մարդկօրէն դէպի նրանց վերաբերվելով: Դիզրաելիի մինիստրութիւնը անկարող կը լինի ծաղրել այն մարդկերանց, որոնք ձգտում են փշրել անասելի լուծը, չի կարողանայ արգելացնել թիւրքերի բռնադատութիւնները և հարստահարութիւնները: Դիզրաելիի և իր ընկերները, ինչպէս երեւում է նրանց ճառերից, Բերլինի դաշնագիրը կատարված իրողութիւն են համարում, բայց պատրաստ են նրա վիճակները իրաւացի, մարդասիրաբար և թիւրքիահպատակ բրիստոնեաների շահերի համեմատ մեկնել: Ցոյս կայ, որ անգլիական նոր կառավարութիւնը կը պահանջի թիւրքիայից ամենարարեխղճաբար կատարել Բերլինի դաշնագրի վճիռները, ինչպէս Զիրնօգորիայի և Ցուսաստանի, նոյնպէս և Արեւելեան Բուլգարիայի և Հայաստանի վերաբերութեամբ: Այդ նպատակներին հասնելու համար Ռուսաստանը և Անգլիան կարող են միանալ, իսկ այդ նպատակներին կարելի է հասնել միայն այն ժամանակ, երբ կը յարգվի Բերլինի դաշնագիրը և բարեխղճաբար կը կատարվին նրա որոշումները: Թէպէտ Բերլինի դաշնագրի վճիռներից շատերը անպարմար են Ռուսաստանի համար, բայց նրանց դժուար է փոփոխել առանց պատերազմի, իսկ այժմ Ռուսաստանը միայն խաղաղութիւն է ցանկանում:

ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՑ

—

Բարֆրուշ, 31 մարտի

Անդրկովկասում հայի սատիկ թանգութեան պատճառով Ռուսաստանից չատ վաճառականներ, գլխաւորապէս բազուցիներ, դիմեցին Կասպից ծովի հարաւային եզերքի վրա գտնված պարսից քաղաքներում, որպիսի են Բարֆրուշ, Սարի, Մաշադիսար և այլն,—ցորեան և այլ ուտեստներ գնելու: Այս քաղաքներում թէ ցորեանը, թէ բրինձը և թէ գարին չատ էժան են, և ծովային ճանապարհով աւելի դիւրութիւններ կան Ռուսաստան հասցնելու: Գները հետեւեալներն են. բրինձի մէկ խալվարը (7 պուդ 20 ֆ.) արժէ 2 թուման պարսից դրամ, ռուսաց փողով 7 ր. 50 կ., գարու խալվարը 16 զրան, (5 ր. 50 կ.), ցորենի խալվարը (9 պուդ) արժէ 28 զրան, ռուսաց փողով 10 ր 49 կոպէկ:

Բազուցի հայ վաճառականներ, թւով մօտ 150 հոգի, երեք ամսից ասել է, որ վերոյիշեալ քաղաքներում գնում են ուտեստի զանազան պաշարներ և գլխաւորապէս բրինձ: Ասում են, որ մեծ քանակութեամբ գնած են, և չատ հաւանական է, բայց ինձ յայտնի է, որ միայն Բարֆրուշ քաղաքում ամբարած ունեն աւելի քան 200,000 պուդ բրինձ, բացի գարուց և ցորենից: Բայց չը նայելով, որ վաճառականները երկու ամսից ասել է, որ իրանց մթերքը պատրաստած ունեն, և կամենում են ուղարկել Ռուսաստան, բայց տեղային մահմեդական հասարակութիւնը ընդդիմանում է և թոյլ չէ տալիս, որ զուրս հանեն, որովհետեւ վախենում են, որ իրանց երկրում էլ թանգութիւն կը լինի, թէպէտ այդ զուր կասկած է:

Վաճառականները ճարահատեալ բողոքեցին թէհրան ռուսաց դեսպանին, և երկար սպասելուց յետոյ վերջապէս մարտի 24-ին հրաման ստացվեցաւ պարսից բարձր կառավարութիւնից, որ թոյլ տրվի առանց գնված և պատրաստի մթերքները զուրս տանելու, իսկ նոր գնողներին արգելվի:

Բայց տեղային ժողովուրդը ուշադրութիւն չը դարձնելով բարձրագոյն հրամանի վրա, ոչ միայն թոյլ չը տուեցին վաճառականներին իրանց պատրաստի մթերքները զուրս տանելու, այլ Սարի քաղաքում յարձակվելով բազուցիների չորեմարանների վրա բոլորը յափշտակելով ցրվեցին: Խռովութիւնը այն աստիճան հասաւ, որ պէտք է մեծ արիութիւն լինէր, եթէ տեղային դենպետը (մուտիդը) վրա չը հասնէր և կատաղած ամբոխին չը հանգստացնէր: Վաճառականների ընդդէմ այս քաղաքում միայն հաշուում է 15,000 ռուբլու:

Այս անգամից յետոյ Ռուսաստանի վաճառականները մեծ երկիւղի մէջ են և ամեն բոպէ սպասում են, թէ մի և նոյն բարբարոսութիւնները կը պատահեն և միւս քաղաքների պաշարներ գնող վաճառականների հետ: Որովհետեւ երբ յիշեալ խռովարարները անպատիժ մնացին, միւսները նոյնպէս կը հետեւեն նրանց օրինակին:

Վաճառականների դրութիւնը այժմ չատ անհարմարելի է, որովհետեւ ոչ կարողանում են իրանց գնած տպրանքները զուրս տանել, և ոչ էլ իր տեղում վաճառելու հնար կայ. նրանք պատրաստ են իրանց տուած փողի գոնէ մէկ մասը ստանալ և վերադառնալ իրանց հարեւները, բայց ոչ պէտք է տայ:

Ահա այդպէս են փոխարինում պարսիկները այն ներքոստութեանը, որ 1870 թ.ին Պարսկաստանի սատիկ սովի ժամանակ մենք ցոյց տուեցինք նրանց, Բաքուից և Աստրախանից առատ պաշարներ մատակարարելով: Լսում ենք, որ մեր վաճառականները դիտաւորութիւն ունեն մի խնդիրք ներկայացնել ուղղակի նորին մեծութեան չարին:

Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագրիները հաղորդում են, որ եկող սեպտեմբերի 6-ին կամ 12-ին Ցուրիխի մէջ լինելու է առողջապահների (հիգիենիստ) միջազգային կոնգրէս:

—Ֆրանսիական ժողովրդական լուսաւորութեան մինիստր ժիւլ Ֆերրի նորերումս այցելեց Ֆրանսիայի քաղաքները: Նրա ճանապարհորդութեան

ժամանակ Վիլ թաղաքի մէջ համայնարանի բժշկական քաղաքի չէնուելեան վրայ գոյնցաւ. Հանդէսի ժամանակ մինիստրը մի ճառ կարդաց, ի միջի այլոց նա այն միտքը յայտնեց, որ հանրապետութիւն և կրօնութիւն բառերը մի և նոյն նշանակութիւն ունեն, որ հանրապետութիւնը ձգտում է ամբոխի մէջ լուսաւորութիւն տարածել։ Կրօնականները ժիվ ֆերրիին ամէն տեղ թշնամաբար էին ընդունում։

—Աւստրիական «Presse» լրագիրը, քաղաքագիտներ անելով անգլիական պատնէշաղանի ուղղութեան լրագրիներից, աշխատում է ապացուցանել, որ անգլիական հանրապետական կարգերը չէ հաւանում Գլադստոնի քաղաքականութիւնը։ Աւստրիայի և Արեւելքի վերաբերութեամբ։

—Ֆրանսիական «Temps» լրագիրը դարձանում է այն իրողութեան վրայ, որ իշխան Բիսմարկին մինչև այժմ հնազանդ գերմանական պարլամենտը այժմ ընդդէմ է նրա մի քանի դիտաւորութիւններին։ Ինքնասպան մենաւորութեան հարցի առիթով պարլամենտի ընդդիմադրական կուսակցութիւնը յարձակողական դիրք բռնեց, յայտնելով, որ ծխախոտի մենաւորութեան մասին խօսքի անգամ աւելորդ է։

Խմբագիր—Տպագրող ԴԱՎԻԴ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԹՈՒՅՏՈՒԹԻՒՐ ԿԱ ԼԻՆԻ

ԱԼԼԷԳՐԻ
ՅՈԳՈՒՏ ՍՈՎԱՏԱՆՋԵՐԻ

Մանրամասնութիւններ մասին իր ժամանակին կը յայտնվի։ Ցանկացողները իրենց ընծայիրը կարող են դիմել հետեւեալ տիպիններին։

Տիպին Ն. ՎԵՐԻՆԵԱՆՑԻՆ Կոյնիգսբերգում սեփական տանը, տիպին Ա. ԴԱՆԻԷԼԵԱՆՑԻՆ Նիժնի տանը Հայոց փողոցում, տիպին Ե. ԲՈՏԻՆԵԱՆՑԻՆ Սարա-Վասիլում որ փողոց, Ղայամազովի տանը, տիպին Ն. ԳԱՄԲԱՐՈՎԻՆ իշ. Բէշտրեմովի տանը, Կոմսեմեանի և Գուդովոյի փողոցների անկիւնում, տիպին Մ. ԹՈՄԲՈՅԵՎԻՆ, Ճաղինովի տանը, Սապօժնայա փողոցի վրա, տիպին Մ. ԹԱՏԻՈՍՈՎԻՆ, Գամբարովի տանը, Կարգասոբովի փողոցի վրա և նոյնպէս ՆԱՅՈՒՈՒՆԵԱՆ լամպերի խանութը, Գվոզդովի փողոցի վրա։

4—5

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(РАСПРОДАЖА)

ՎԵՐՋԻՆ ԵՒ ԱՄԵՆԱՅԻՆ ԳՆԵՐՈՎ

ՏՂԱՄԱՐԴԵԿԱՆՑ ՊԱՏՐԱՍՏ ՇՈՐԵՐԻ

ԹՈՒՂԹՈՒՄԻ ՄԻԳԱՅՆԵԱՆ ԿԱՄԱՐՋԻ ՎՐԱ

ՆԱՍԻԲԵԱՆԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Տրիկոտ ամառվայ պարսամ . . .	10 ր. —
Ժուպիտի ձեռքերը	10 ր. —
Վիզիտ	15 ր. —
Սև սերտուկի	25 ր. —
Տրիկոտ գլխաւոր վերակալ . .	3 ր. —
Սև վարտիքը	7 ր. —
Դրսի ժակետ	8 ր. —
Առաւօտվայ ժակետ	8 ր. —
Երեխայոց տրիկոտ գլխաւոր	2 մինչև 14
տարեկան	3 ր. —
Գալոշներ	12 ր. —
Պարտմոնի գլխաւորներ	5 ր. —

Նոյն տեղ Ծախվում են կանանց և տղամարդանց շապիկներ, կարսներ, կանանց կօշիկներ, նշոյնպէս գլուխներ, կոստիմներ, թաշկինակներ, մեռնոցներ, պէնեռարներ և ժիլետներ։

6—10

ԵՒՈՒ ԿԱՍՈՒՄՈՎԻ ԵՒ ԸՆԿ. ԱԶԻԷՏԻԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Ցայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են ամսով 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսերները յետաձգութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և ստանալ երկար ժամանակաժամկէտում, որը չատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կամաւորի մէջ, որ նոյնպէս ստանում է այդ տեսակ տոմսակներ։ Գրասենեակը գտնվում է Ալէքսանդրեան սրտի Հանդէպ, Թումանովի տանը։

4—10

ОСОБА, знающая РУССКІЙ, ФРАНЦУЗСКІЙ, НѢМЕЦКІЙ языки и начало МУЗЫКИ желаетъ получать мѣсто ГУВЕРНАНТКИ. Объ адресѣ узнать на ПОЧТОВОЙ СТАНЦІИ въ ДАМСКОЙ комнатѣ.

ՄԻ ՏԻՊԻՆ, որ գիտէ առաներէն, ֆրանսերէն, գերմաներէն ԼԵԶՈՒՆԵՐԻ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ սիրվորները, ցանկանում է ՏՆՈՒՑԻՆ ՎԱՐԺՈՒՀԻՈՒ տեղ առանց։ Հարցէն իմանալ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆԻՆ, ԿԱՆԱՆՑ սենեակում։

2—3

Երեւան Ֆրանսիայի ՕՐԻՈՐԴՆԵՐ ցանկանում են ընդունել իրանց մօտ երեխաներին դասեր տալու համար, առաւօտեան ժամի 9-ից մինչև ժամի 1-ը։ ԴԱՍԵՐՆ կը լինեն ֆրանսերէն, գերմաներէն լեզուներից և մուզիկայից։

Հարցէն Սօլօլակի, տան Օրբելի։ № 14.

2—3 (1)

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ։

Երկուշաբթի. Դավթանակի կանանց հիւանդ. Թօրալեվի ներքին հ., Բաթենանց կանանց և երեխաների հ., Քիւչարենանց խրուրդիական և աչքերի հ., Շանմրօրսկի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և ներքին հ.։

Երեքշաբթի. Մինկովիչ խրուրդական հ., Վարօրով վիներական և բոգոզի հ., Բէյլիս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասովգլեազով, Լիսիցով և Վամրշով ներքին հ.։

Չորեքշաբթի. Լիսիցով և Բուգկովսկի ներքին հ., Շանէմրօրսկի վիներական և կաշու հ., Առաւոտովրով կանանց հիւանդութիւնների։

Հինգշաբթի. Վարօրով վիներական և բոգոզի հ., Բարենանց կանանց և երեխաների հ., Լիսիցով և Վերմշով ներքին հ., Քիւչարենանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.։

Ուրբաթ. Դավթանակի կանանց հ., Մինկովիչ խրուրդական հ., Կրասովգլեազով, Լիսիցով ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շանէմրօրսկի և Ասատուրով վիներական և կաշու հ., Բարայեով ջղային և ներքին հ.։

Շաբաթ. Լիսիցով և Վերմշով ներքին հ., Բարով կուրքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.։

Բացի այդ բժիշկ Վարօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվճար ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը։

Բժիշկ Բարաեով չորեքշաբթի օրը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար։ Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը։

Առանձնապէս Օրբելիա ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ։

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։

Բժշկանոցի գլխաւոր Լիսիցկի։

Ա. Ա. Մանդելշտամի գրադարանում գտնվում է հետեւեալ տպագրութիւնների ամէն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները, միասին գնողներին (Թիֆլիս, Հայոց Պ. անքի Պոե և փոքր փողոցների անկիւնում, տպագրողի սեպհական տանը, № 42, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով։

1. Հայկական Պնդան, երգարան, 8 ծալ. եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուսը միասին . . . . . 70 կ.

4 Հազար օրինակից մեծագոյն է մօտ հազար օրինակ, մօտ 700 բուբլու։

2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . . 20 կ.

1200 օրինակից մեծագոյն է մօտ 700 օրինակ, մօտ 140 բուբլու։

3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես։ 6 հազար օրինակից կը լինի մեծագոյն մօտ 4 հազար օրին., մօտ 500 բուբլու։ . . . . . 10 կ.

4. Դուռնամեջտով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, գիրը թեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը։ № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. տասպան, կամ 480 թերթը, 4 բուբլի, մօտ 340 տասպ, մօտ 1360 բուբլու։ Թերթը մի կողմից պակաս։

5. Տղաքաղաքներին տղաքացանցներ մեծ թարաղա, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 բուբլու, թերթը . . . . . 5 կ.

6. Պօմբը ուսուցչական և անգրագիտաց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր. 300։ . . . . . 15 կ.

1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մեծագոյն, մօտ 52 բուբլու։

Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 բուբլու։

Կարելի է դիմել Պ. Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, на углу Бассейной.

ՀՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՎՍԻՍԵԱՆ

ԲԷՇԻՐՈՒԹԻՒՆ

Որ Հայոց փողոցում ամաներ է ծախում, խնդրում է այն անձը, որ Նրան երեք նամակ է ուղարկել քաղաքային փոստայով, յայտնել իրան թէ ինչ հայկով պէտք է ուղարկել պատասխաններ, որովհետև նամակները սորա-գրված չէին և Նրանց վրա նշանակված չէ հայկէն։

ՀՈՎՀԱՆՆԷՍ Մ. ԲԷՇԻՐՈՒԹԻՒՆ

Գուբերնիա

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԳԱՌՆԱՊԷ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Զանազան թիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուգանանցի։ Իւրաքանչիւր օրինակի գինն է մէկ բուբլի։ Վաճառվում է յոգաստ Վանայ սովատանցների Թիֆլիսի բոլոր երաժշտական մագազինների մոտ։ Գումարով առնողներին զիջում կը լինի։ Օտարաքաղաքացիք գիմում են հետեւեալ հասցէով. Въ Тифлисѣ Ивану Артемьевичу Сузаваджянъ, на Петхайнской улицѣ, собственный домъ № 13. Ցանկացողները ստանալ միասին և ցիտանի Տաճիր երգարանը, պէտք է ուղարկին մէկ բուբլ երեսուն կոպ.։

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան Վարչութիւնը պատմում է յայտնել, որ արդէն զուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառների մոտ ընկերութեան տպագրութիւնը։

ԲԻԶԼԻ-ՍՏՈՅՈՒ, ԹՈՎՄԱՍ ԵՂԲՕՐ ՏՆԱԿԸ, փոս. երեխաների համար Պարմէր, թարգ. որ. Ն. Տէր-Մարիսսեանի։ Պատկերազարդ և կազմած—60 կ.։

Առաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով Въ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

Այս օրերս զուրս կը գայ նոյն ընկերութեան հրատարակութիւնը. ՄՈՒԵԼ ԵՒ ՆՈՐԱՆ ԶՆԱՐԵԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ. աշխ. Տէր-Բաթանցի։

Անտա ՂԱԶԱՐԵԱՆ, Եղիսաբէթ և Սոֆիա Ղազարեաններ սրտի ցաւով յայտնում են, տասպիները իր ազգիկայ, իսկ մերձինները իրանց քրոջ ԴԱՒԱՆՆԻ ՂԱԶԱՐԵԱՆԻ մահվան մասին։ Յուղարկաւորութեան հանդէսը, իրանց դիակարանից, Կուկիայում, Նիկոլայեվսկայա փողոց, № 7, լինելու է Կուկիայի Ս. Աստուածածնի (Թանգչյան) եկեղեցում, ԿԻՐԱԿԻ օր, մայիսի 4-ին, ժամը 10-ին առաւօտեան։

2—2

ՆԻՈՒ-ԷՕՐՔԻ ԶԻՆԳԵՐ

Ամենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բաւական ըլլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազմուածքին պարզութեամբը, հաստատութեամբը և այլ։ երպ աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համառօտէ զմեզ համբերելու մէկիկ մէկիկ իրենց գերազանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա։

Վերոյիշեալ Նիու Յօրքի Զինկեր ընկերութիւնը այս ապրիլի սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս եւ՝ Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Ամանակի փոփոխն, Զուպալովին տունն, Երեւանի հրապարակի մօտ անմիջապէս և կը խնդրուի խաթունայց և պարոնայց ուզող ստանալ այսպիսի մեքենայ դիմել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս ընկիկ նորոյց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Զինկերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և գժբաղդաբար իրենց մեքենաներով կը տարակուսացուցեն սեպհական մերոնց լաւութեան անունն։

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան գիտել մեզ նամակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուղելու համար, որ կը խրկենք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցունելու համար, որոնց կը պատասխանենք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ, մեր երեսպիրն է։

Գ. Նեյդլինգերъ. Тифлисъ.

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Եւրոպայի։

Խանութի մէջ կարելի է ուղղել խանգարված մեքենաները։

3—3 (2)

Дозволено Цензурою 2 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона